

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 Ժր.
Վեցամսեայ	6 "
Արասահմանի համար	
Տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար	
Տարեկան	3 ար.
Վեցամսեայ	1.50 "
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՃԱՐԵԼԻ	

Պատուցման տարի առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին անկերիկայի համար 20 ժր. գնդը կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի (15 ԱՄԵՐԻԿԱՅԻ)
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱԲԱԹ

R. P. Kalémearian
Mechitharistangasse W. 4
(Autriche)
Vienne

Նամակ եւ դրամ դրկէլ
պոստական հասցիկն

Редация на вѣстникъ
«Шаржумъ»
Варна

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կոնստանտնուպոլիսի Երեւոյի տպարանէն

Արասահմանի համար ձեռքի
(20 ԱՄԵՐԻԿԱՅԻ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиѳевъ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՉԻ ՎՃԱՐՈՂ
ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒՆ

Շարժումի տարեշրջանին 10րդ ամսին է որ կը լրանայ. ու դեռ բազմաթիւ բաժանորդներ սանդիմ չը իսկ չեն բարեհաճած վճարելու: Այդ բաժանորդները արդ արանայու ոչ մէկ միջոց ունին, որովհետեւ իրենց յօժարութեամբ են ստացած:

Խմբագիր մը պարտաւոր չէ ամէն ժամանակ իր բաժանորդներուն յիշեցնելու իրենց պարտքը: Բանի որ թերթը կը ստանան պէտք է որ իրենց բաժանագիրն ալ վճարեն: Պարտաճանաչութեան ամենատարրական գիտակցութիւնը ունեցող անձը կը զգայ թէ թերթը կանխիկ ծախքեր ունի, գորտ հայթայթելու համար, միակ աղբիւրը բաժանագիրներն են, Անտարբերներու հանդէպ վարուելու կերպը գիտնք, բայց դեռ քիչ մըն ալ կը սպասենք, յուսալով որ, այլևս բաժանորդները պիտի ըմբռնեն խմբագրութեանս գրամի ստիպողական պէտքը, քանի որ հիմա, թուրքերէն յաւելում հանելու համար, արդէն հարկադրուած ենք նոր ծախքերու մէջ մտնել:

Իսկ նոր բաժանորդ գրուողներուն համար միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ, պէտք է իրենց հասցէին հետ թերթին բաժանագիրն ալ շրկեն, առանց որուն թերթը չուղարկուիր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԹԻՒ

Եթէ մեր հասարակական կեանքի մէջ մերթ ընդ մերթ տեղի չունենային այն կարգ մը յատկանշական ու մխիթարիչ երեւոյթները, որոնք կը մոռցնեն ամէն յոռետես ենթացրութիւններ ու եռանդ ու ոգեւորութիւն կը պատճառեն ազգային կեանքով հետաքրքրուող անձերուն, իսկպէս մեր վիճակը յուսահատական կարելի պիտի ըլլար համարել:

Արդարեւ, անուրանալի իրողութիւն մըն է այսօր թէ՛ հայը առհասարակ անպարտաճանաչ ու անփոյթ է գէպի իր մտաւոր մշակութեան աշխատողները, և իրեն աւելորդ ծախք մը կը նկատուի:

տէ, օրինակի համար, վարժարանին դրամ տալ, հեղինակներն ու հրատարակագրերը քաջալերել, Ու աշխարհի բոլոր անկիւններուն մէջ կը կրկնուին յաւիտեական յանկերգի մը պէս, միևնոյն գծագրութիւնները վարժարանի պիւտեակին հայթայթման մասին, միևնոյն տրտունջները հեղինակներու՝ որոնք երկար գիշերներու տքնութեամբ արտադրած գործի մը փոխարէն, և ոչ իսկ կրնան տպագրութեան ծախքը հանել, կամ հրատարակագիրներու՝ որոնք ամիսներով իրենց բաժանորդներուն ապառիկ թերթ ուղարկելէ ետքը, հսկառակ քանի քանի անգամներ տեսնուած յայտարարութեանց, ցուրտ ու պժգալի անտարբերութեան մը կը հանդիպեն լոկ:

Այս պայմաններուն մէջ բնականաբար թերթերը չեն կըրնար յարտուել, ասուպի պէս կը փայլին պահ մը, ու կանհատին իսկոյն, սպառած ուժի մը վշտագին ապարտութիւնը ձգելով մեր յիշողութեան մէջ:

Եւ սակայն, եթէ ընդհանրութիւնը անտարբերութեան մէջ ընդարմացած կը մնայ, յանկարծ նոյն հասարակութեան ծոցէն իսկ, երեւան կուգան անհասական ուժեր, որոնք, աւելի պարտաճանաչ, աւելի գործնական ու հեռատես, կը փորձեն իրենց օրինակով սթափեցնել ընդհանրութիւնը, մղում տալ յառաջագիմութեան գործին եւ քաջալերել օգտակար ու կարեւոր ձեռնարկները: Ու, որքան ատեն դեռ պիտի գտնուին այդ կարգի ուժեր, որոնք նեղ ու վճռական պարագաներուն երեւան գայով, պիտի վերականգնեն կորստեան դուռը հասած հանրային հաստատութիւնները, դեռ յուսահատելու տեղի չի կայ: Ազգը կրնայ ժամանակէն օգտուիլ, և օրինակ առնելով անոնցմէ, իր թերութիւնները ուղղել, իր պարտքը ճանչնալ և ազգային վերակենդանութեան գործին մէջ, իր բաժինն ունենալու հոգ տանիլ:

«Շարժում»ի մասնախմբին կազմութիւնը այն մխիթարիչ երեւոյթներէն մէկն էր, զոր վերջ մասնանիշ ըրինք, Գանի մը անձեր, լոկ անոր մակերած՝ իրենց մէջ բարոյական պարտականութիւն մը զգացին «Նարժում»ի նոր մղում մը տալ, և այդ զգացումէն դժբախտ մասնախումբ մը կ'ստեղծուէր: Սարակութեան մէջ իրենց համակիրներու աջակցութիւնը խնդրելու համար զարմարեցանք, որուն արժանապատիւնը մէջ իրենց համակիրներու աջակցութիւնը խնդրելու համար: Նոյն արժանապատիւնը զարմարեցանք, որուն արժանապատիւնը մէջ իրենց համակիրներու աջակցութիւնը խնդրելու համար: Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

Եւ սակայն չոր համակիրութիւնը որքան անկեղծ ալ ըլլայ, չի կրնար թերթ մը պարեցնել, երբ պարտաճանաչութեան ու զոհողութեան ոգին չէ միացած անոր: Բազմանքներ արտայայտել, ծրագիրներ յորինել շատ դիւրին գործ է. բայց պէտք է իրագործել զանոնք: Գաղափարի ախոյանները քաջալերել, վատ սովորութեանց ու նախապաշարումներու դէմ բացարձակ կռիւ մղող անձերուն գէթ նիւթապէս օժանդակել է՛ն առաջին պարտականութիւնն է ամէն անոնց՝ որոնք ինքզինքնին նոյն սկզբունքներուն համակիրներ են կատելով հանդերձ, բարոյապէս զանոնք տարածելու և ժողովրդականացնելու կարողութիւնը չունին:

գաղափարն անվերջ ու անհաճոյ կռիւներու ապարէզ դառնալէ և ապահով ու անսայթաք պիտի ուղղուին դէպի իրենց ճշմարտնպատակը:

Հիւանդութիւններ կան, որոնք անձերու համար կատարու ալ բժշկութիւններ են. Մարմինը կը հիւժի տակաւ, գործարանները կը տկարանան, ու հիւանդը չի զգար իր վիճակին վտանգաւոր կողմը. Յանկարծ կատաղի հիւանդութիւն մը կը տապալէ զայն, կը ստիպուի ահամայ դարմանումի դիմել, իր վիճակին ծանրութիւնը ըմբռնել և հոգ տանիլ զայն բարելաւելու:

Նոյնն է նաեւ ազգերու համար: Անկուճը, փտութիւնը անպաշար դէպի կորուստ կառաջնորդեն ազգերը, ու մենք չենք զգար, որքան ատեն բուռն ցնցում մը չաթափեցնեն զմեզ: Անակնկալ երեւոյթներ կուգան յանկարծ կասեցնել զմեզ և մատնանիշ ընել մեր առջեւ բացուած վիճը: Պէտք է օգտուինք այդ երեւոյթներէն և ուղղենք մեր թերութիւնները, որպէս զի նոյն վտանգներն ու դառնութիւնները անպազար չի կրկնուին ապագային մէջ ալ:

ՇԱԶԱՊ

ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Բժիշկ Սիւլհոն Շահ-Նազարեանց.
«Մշակ» (Չիսակեակի տարի) տպարան
Բարխուդարեանի. գինը 1 ռուբլի:
Մոսկուա

Ստացանք բժիշկ Սիւլհոն Շահ-Նազարեանի այդ բրոշուրը. որը մի քննադատութիւն է վերջին տարիների «Մշակ»ի մասին. Բննադատը ապացուցանում է որ «Մշակ»ի վերջին վարիչները դաւաճանել են հիմնադիր Գրիգոր Արծրունու սկզբունքներին և ուղղութեան, եղել են կեղծ ազատամիտներ, գրական մաքրութիւնը ոտնակոխ անելով գաղափարի քողի տակ թաքնված, անձնական ազտոտ կռիւներ են

մղել իրենց ամեն մի հակառակորդի դէմ, եղել են անտեղի և անհիմն մեծամիտներ և այլն...

Քննադատը Արժուոնու առաջնորդող յօդաձևերից բերում է զանազան կտորներ, ներկայ խումբագիրներին հին «Մշակոյն» դաւաճանած լինելը հաստատելու համար...

Այդ քննադատականը շատ ճշնոյղ տպաւորութիւն է թողում և աւելի զօրեղ կազդի այն մարդի վրա, որը միայն հին «Մշակոյն» է ճանաչում...

Այդ գանգատները մենք շատ վաղուց լսել ենք. դրա վրա և աւելանում է մեր անձնական տպաւորութիւնը որ ստացել ենք «Մշակոյն» «Մուրճ»ի դէմ մղած

կռիւններից և ուրիշ շատ անհամ վէճերից:

Բժիշկ Շահ-նաղարեանի քննադատութեան մէջ շատ ճշմարտութիւններ կան. սակայն պարոն բժիշկը ինքն էլ շատ կէտերում են թարկվել է կրքի, չէ պահպանել այն գրական մաքրութիւնը, որը իրեն համար այնքան ցանկալի է տեսնել հայ մամուլի մէջ...

Եթէ Պ. քննադատը միայն փաստերով խօսէր, և իր լրջութիւնը միշտ պահպանած լինէր, գուցէ և աւելի ազդեցիկ լինէր: Գիտոյ Պ. բժիշկը սխալում է, մեր կարծիքով, յայտարարելով թէ՛ բոլոր գրողները հեռացել էին «Մշակոյն»:

Այդ գրողներից շատերին մենք ճանաչում ենք. գրանքի բեր գրողներ թերեւս աւելի գերազանցել են քան «Մշակոյն» գրողները. սակայն իբր մարդիկ, հասարակութեան անդամներ է թիկլայի տեսակէտից «Մշակոյն» վարիչներից գոնէ մի քիչ պահուտ են: Այդ կարծում ենք որ շատ էլ յօժաժարութեամբ չեն հեռացել «Մշակոյն»:

Մի երրորդ սխալ էլ ունի Պ. բժիշկը. այդ այն է որ կասկածում է «Մշակոյն» կան լէգէոն լինելում, այդ լէգէոնը ամբողջով

«Մշակոյն» խմբագրութեան անձնաւորութիւնների մէջ: Չէ, իսկապէս «Մշակոյն» կան լէգէոն կայ. ուրիշ խնդիր թէ այդ լէգէոնը կազմված է լոկ հասարակութեան գաղան վստահութեամբ: Բայց կայ: Եւ քանի որ կողմասի միւս թերթերը իրենց բարոյականութեամբ, սկզբունքներով և առած նիւթերով չեն կարողանալու գերազանցել «Մշակոյն», միշտ «Մշակոյն» գերակշռող տէր պէտք է ունենայ, հէնց իր ներկայ գրութեամբ: Թէի այդ շատ վստահար է ուսուսայ մամուլի համար:

ՎԱՐԳՈ

ՎԱՍԻՏԱ ԵՒ ՊԻՂԱՏՈՍ (ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

(Շար. Անի. քիւն և վերջ)

Յուդայի հին կառավարիչը, նոր երկրի մեծ մասը անցնելով, իրեն բնակավայր ընտրեց հրաշագեղ լիճի մը ափը, և հաստատուեց Լիւչնոնաի քաղաքը: Քանի մը ամուսան մէջ Պիղատոս իր հանդարտութիւնը եւ առողջութիւնը վերստացաւ. ուրեմն կլաւտիան պիտի վայելէր ճշմարիտ երջանկութիւն մը: Եթէ ամուսնոյն ուժին ու կորովին հետ սէրն ալ վերահաստատուէր:

Բայց այդպէս չեղաւ: Պիղատոս լիճը ձկնորսութեան և անասունները որսորդութեան կերթար և բնաւ չէր հրաւիրեր կլաւտիան իրեն ընկերանայու:

Տարի մը այս հրաքանչ բնակավայրի մէջ ապրելով, կարծես հրաշք մը կը գործուած էր. թախճալից ու մոխրի Պիղատոսը գուարթի եւ ուրախ եղած էր: Բրիտանոսի նոր այակերտները որ սկսած էին քաղաքին մէջ

խուփել, բնաւ չէին վրդովներ Պիղատոսը. կարծես ամէն բան մոռցած եւ բոլորովին ուրիշ մարդ դարձած էր:

Կլաւտիան կզգար թէ խուլ նախանձ մը կը յափշտակուէր. կին էր, և յստակօրէն կը տեսնէր թէ իր ամուսնոյն այս կերպարանափոխութիւնը արտակարգ պատճառի մը արդիւնք էր, զանազան նախազգացումներ իրեն կը գուժէին մտակայ դժբախտութիւն մը. սէրը այլակերպած էր Պիղատոսը, անկասկած մէկը կը սիրէր, և այդ մէկը ինչը չէր այլևս: Պէտք էր ամէն գնով գտնել այս մրցակիցը. ու անհամբեր առիթին կը սպասէր:

Քանի որ շարաթ վերջը, որ մը ամուսնը յայտնեց թէ առտուն կանուխ պիտի մեկնէր, լեռան մէջ քարայրի որսորդութեան:

Կլաւտիան բան մը չըսաւ, բայց որոշեց հեռուէն հետեւիլ անոր, առանց նշմարուելու:

Պաշտին մէջ բաւական քաղիւ վերջը, ճամբան իողուց և մտաւ քարանձաւը որ բլուրի մը ստորոտը կը բացուէր: Կլաւտիան սպասեց, և քիչ վերջը դեռատի հովուէի մը նըշմարեց. անրիճ սպիտակութեամբ կտաւէ պարզ զգեստ մը հագած՝ առնիկայ կարծես լեռներու պարմանին էր:

Իր աչքերը լճին ջուրերուն կապտագեղ ցոլքն ունէին ու իր ոսկեգոյն մագերը հասուն հասկերու պէս վայրի ծաղիկներու պակով մը զարգարուած էին:

Իր քաղաքը թոչուէի մը թեթեւութիւնը ունէր, ու իր դէմքը սէր ու պարկեշտութիւն կարտայայէր: Երբէք կլաւտիան աւելի գեղեցիկ արարած մը չէր երեւակայր: Առտի հրացամբ զայն կը պիտէր: Դեռատի ալջիկը Պիղատոսի գացած ճամբուն հետեւելով ինքն ալ քարանձաւն ներս մտաւ:

Հիմայ, ամէն գաղտնիք պարզուած էր ինչո՞ք ընկճեալին: Լքուած էր այն մարդէն, զոր այնքան սիրած, պաշ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱՆԱԾ ԹՈՉՆԻԿ

— — — II. — — —

Կառքը սահում է երկար ու քարած փողոցով. բաւական մութ է, լապտերները սպակիները ձմեռայ խոնարհութիւնով ծածկվել են, ու թոյլ չեն տալիս որ լոյսերը թափանցին և փողոցը լուսաւորեն: Փողոցի անցողաբձը բաւական նւազել է, աղմուկ չը կայ: Լուս ենք և մենք: Վարանած Թոչնիկը իր վիզը այնպէս է փաթաթել որ բերանը անկար դ է բանալ: Եւ չի էլ ուզում բանալ, որովհետեւ ցուրտ օդ չնչնուց վախնում է:

— Ինչո՞ք մարդ, մտածում եմ, ցուրտ, մաքուր օդ չնչնին անգամ որ քեզ վնասակար է, հապա էլ ի՞նչ քաղցրութիւն կայ աշխարհում քեզ համար: Հա, մի բան. հայրենքը, որին դու ծառայել ևս եւ ուզում ես ծառայել: Սակայն ի՞նչ կարող ես զու անել հիմա հայրենիքի համար: Սեւանա լճի բուքն ու քամին, վտաբանիք ճամբորդութեանդ միջոցին, վերջին հարւածն են հասցրել քո մարմնին, որը արդէն քայքայել է իր գիտութեան սաճարներում: Ափսոս,

ի՞նչի բնութիւնը այդ զօրեղ հողին, կամքը և միտքը՝ այդպիսի մի թոյլ մարմնի մէջ է դրել, որ դու էլ Մեծ Հրէայի խօսքիւ կրկնելու ստիպված լինէիր—«հողիս թէիւ յօժար է, բայց մարմինս սկար»:

Այդ մտածումների մէջ էի երբ կառքը սկսեց բարձրանալ դարի վերձիւրը զժւարութեամբ էին բարձրանում, քարերից սայթաքելով: Յանկարծ Թոչնիկը բերանը բացեց և կառապանին հրամայեց կանգնել, հապա ինձ գտնուելով ասեց.

— Ինչնեք, ձիերը մեզք են, տանջվում են, սեսաք ի՞նչ դժւարութիւնով էին բարձրանում: Թո՞ղ այս դարիվերը բարձրանան, յետոյ կը նստենք:

— Բայց այսուհետեւ միշտ այսպէս պէտք է լինի ճամբան, իսկ դուք բոլորովին չէք կարող բարձրանալ, պատասխանեցի ևս:

— Ոչինչ, ոչինչ, կը դիմանամ, փոյթ չէ թէ մի քիչ կը յոգնեմ:

Իջանք:

Կառքը սկսեց կամաց կամաց բարձրանալ, իսկ մենք նրան հետեւեցինք: Վարանած Թոչնիկը թեւը անցրել էր իմ թուկին և յեմվել ինձ: Մի քանի վայրկեանից յետոյ նկատեցի որ նրա քայլերը շատ են դանդաղում:

— Կարծեմ չէք կարողանում քալել, ասեցի և կանգնեցի: Թոչնիկի գոյնը բոլորովին թուել էր, մոմի

գոյն ստացել: Շունչ չէր կարողանում առնել:

Կառապանին ձայն տւի եւ պատւիրեցի կանգնել ու մեղ սպասել: Ճշմարիտն ասաց վախը սիրտս ընկաւ. ինձ թւաց թէ ինչո՞ք Թոչնիկը հէնց այդ մութ գիշերին, ճամբու մէջ սողը պէտք է իր հողին աւանդի... Բարեբախտաբար նա շուտով ուժի եկաւ. թեւը ամուր գրկեցի և գրեթէ գրկած հասցրի մինչև կառքը. նստեցինք նա թիկնեց կառքի մէջքին և մենք ճանապարհը շարունակեցինք:

Մի քանի բողբոջ հասանք ժողովատեղին, կառքից իջանք. պէտք էր անդուրանիքի վեր բարձրանայինք: Մէկ մէկ աստիճան սկսեցինք բարձրանալ. ամեն մի աստիճանի վրա մի քիչ հանդիստ էր առնում ինչո՞ք Թոչնիկը: Վերջապէս մտտեք սրահը, ուր հաւաքվել էին մեր բոլոր բարեկամները:

Գեղեցիկ կահաւորված, յատակը թանկագին գորգերով ծածկված սրահի մէջ հաւաքվել էին մօտ յիսուսի չափ հայ երիտասարդներ, որոնց մէջ ամենքից տարեցը հազու 35 տարեկան լինէր: Ամեն զասակարգն էլ այնտեղ իր ներկայացուցիչը ունէր, որոնք միմեանցից տարբերվում էին դէմքերով, խօսվածքով, հագուստով և շարժվածքներով:

Ժողովականները միմեանցից տարբեր էին ոչ միայն արտաքին ձևերով, այլ և իրենց բնութեամբ, զատարակութեամբ ու դիրքերով:

Բայց դրանց միացրել էր մի ուժ, մի գորութիւն, որ աշխարհի ամենաբարոյական ուժն է, և որ տարբեր մարդկանց մոռացնէլ է տալիս գիրք, զանազան աշխարհիկ սովորութիւններ և այլն: Այդ ուժը հայրենիքի սէրն է. իսկ այդ սէրը՝ մարդկային բոլոր ազնիւ զգացումներին գուժարը: Նրա առջև խորտակվում է ամեն մի պատենչ, հալվում մարդկանց սիրաբ պատող ամենահաստատուն սառոյց և միմեանց մտեցնում գրկախառնվել տալիս:

Վարանած Թոչնիկի հետ մտանք այդ լուսավառ ու շքեղ սրահը, որը արդէն ծխախոտի մխով լցվել էր:

Թոչնիկին տեսնելով բոլորն էլ ոտքի կանգնեցին և սկսեցին հերթով բարեւել:

Թոչնիկի հազը բռնեց, ամբողջ հասարակութիւնը իրար անցուտան տէրը իսկոյն հրամայեց պատուհանները բանալ, մեր ընկերներէց մէկը՝ որ բժիշկ էր, իսկոյն վրա վազեց: Վերջապէս մի քանի բողբոջ մէջ Թոչնիկի հազը դադարեց, նրան բազմեցրին փափուկ զբւանի վրա, նախազանք ընտրվեց և ժողովը բացվեց:

Իհարկէ առաջին խօսքը նախագահին էր ու նա սկսեց.

— Պարոններ, անշուշտ ամենքդ էլ

տած եւ որուն այնքան զօրավիգ եղած էր: Իր կանխազգացումները զինքը խաբած չէին, իր ամուսնունջն ֆիզիքական ու հոգեկան փրկութիւնը սիրոյ արդիւնքն էր, բայց մեղապարտ սիրոյ մը: Մինչև հիմա իր կրած սուսուսանքները անկարեւոր էին բազմաթիւ շնորհակալ վիշտին հետ որ կը մտնէր ամբողջ էութիւնը, եւ սակայն այնչափն ալ չէր բաւեր կուզէր այս տառապանքով տանջուիլ, լսել տոյն սիրային խօսքերը զորս վասը պիտի մրմնջէր նոր սիրականին ականջներէն վար. մութին մէջ պահուած մեղմիւ սահեցաւ անոնց մօտ առանց նշմարուելու: Ինչ անսարան կյանքի համար, Պիղատոս գիզեցողիկին առջեւ ծնրադիր պաղատողին կը հայցէր անկէ իր սիրոյն պատասխանել, կը վստահեցնէր զայն թէ՛ կ'ընտրեան պիտի առնէ ու միշտ պիտի սիրէ. ու ան սիրատարի ու յափշտակուած կրկնալէր անոր խօսքերուն հրապոյրը: Արդէն զէպի անոր հակած, կը պատրաստէր իր շրթունքները սիրոյ համբոյրներուն յանձնել. երբ յանկարծ զայրագին աղաղակ մը լսելի եղաւ եւ կ'աւտար արդարութեան դիցուէի մը պէս յառաջացաւ զէպի շտաբած սիրահարները:

Գեոտարի աղջիկ, մի հաւատ ընծայեր այս երգմտադրութիւն անուշիկ խօսքերուն. անոր մի յանձնէր քու սիրտդ. ան իմ ամուսինս է, անիծեալ Պիղատոսը վատը որ մահուան դատապարտել առաւ Յիսուսը, քու Աստուածդ, վասնզի քրիստոնեայ ես, ինչպէս կը յայտնուի խաչ հանելէդ. անշուշտ քեզի ծաղիկներով պսակեց, բայց այդ ձեռքերը քու փրկիչ փուշով պսակեցին. զգուսնքնէր կը շտապէ քեզի, բայց այդ ձեռքերը սուրը զոհին գաւազանի հարուածներ տուած են, անիծուած է ան եւ զուն ալ պիտի անիծուի քանի որ կը սիրես զայն:

Գեոտարի հելլետուհին այս խօս-

քերը լսելով անկհնդան գետինը ինկաւ եւ Պիղատոս, ամօթէն, յուսահատութենէն եւ վիշտէն խելագարած վազեց զէպի լիճը եւ ալիքներուն մէջ զահալիժեց:

Այն ատեն արտասովոր երևոյթ մը անդի ունեցաւ. շուրերուն ծոցէն ճիշդ հոն ուր նետուած էր, հակալ լեռ մը բարձրացաւ սեւ ու ամայի բոլորովին տարբեր անոնցմէ որոնք լիճը կը շրջապատէին: Մինչև այսօր անիկայ դեռ կեցած է ճիշդ առաջուան պէս ու Պիղատոսի անունը կը կրէ ի յիշատակ այս զէպիին:

Կլաւտիան չի կրցաւ տանիլ այս խորովիշտը. մինչև լեռան գագաթի յաւիտենական ձիւները բարձրացաւ, ու հոն սպիտակ պատանքի մը պէս փռուած՝ սպասեց մահուան ու շունչը փչեց արտասանելով անունը անոր՝ որ վայրագօրէն դաւաճանած էր իրեն:

Թարգմ. Յր. ՎԱՐԴԱՆՈՒՇ

ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ
ՅՐԱՆՍՍԱԶԱՅ ԲԱՌԱՐԱՆԸ

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ յարգելի հեղինակին հակայական աշխատութեան առաջին հատորը որ 1060 երեսներէ բաղկացած է, իւրաքանչիւր էջի վրայ երեք սիւնակներով, ու իր մէջ կը պարունակէ միայն ութը (A-H) սկզբնատառերով բառեր:

Այս բառարանը մինչև օրս լոյս տեսած ֆրանսահայ բառարանները կը գերազանցէ իր գիտական, արուեստագիտական, ուղղագրական, կենդանաբանական, բուսաբանական եւ այլն բառերու հարստութեամբ՝ հանդերձ զոչացողիչ բացատրութիւններով, ոճերով եւ ամէն ճիւղերու վերաբերեալ նկարներով:

Յարգելի հեղինակը, ինչպէս կերեւի զբարբրին նախապատուութիւն

գիտէք մեր այս օրուայ ժողովի նպատակը: Մեր առջեւ բարդ հարցեր կան դրված, աշխատենք զուր շատախօսութիւն չանել, բուն հարցերից չը չեղվել. որպէս զի կարողանանք մի գրական եզրակացութեան յանգել: Չը մոռնանք մեր որոշումները հիմնել գործնական հողի վրայ, որպէս զի մեր այսօրուայ համախմբումի արդիւնքը միայն խօսքերը չը լինեն:

Շատ ճիշդ է ասում, լաւ է ասում, լավեց ամեն կողմից:

Ինչպէս երևում էր նախագահը այդ տեսակ շատ ժողովներէ էր մասնակցել եւ ճոռմարանութիւնից ձանձրացել էր:

Իհարկէ ժողովի մէջ ինչ խօսքից եւ ինչ որոշումներ տրվեցին, այդ ընթացքները իմանալ չեն կամենայ, որովհետեւ այդ այն ժողովի գաղտնիքները են. միայն այսօրու կարող ենք յայտնել, որ ժողովը որոշեց յեղափոխական գործազուլ չանել, միութեան խնդիրը շուրը գցել եւ, հէնց սկզբում, վարանած թռչնիկին յայտարարեց որ միութեան մասին խօսելն անգամ աւելորդ է եւ ինքը ժողովին կարող է միայն մասնակցել այն զէպետմ, եթէ բացարձակապէս հրաժարվի այն կուսակցութիւնից, որի հետ միանալ է առաջարկում:

Թռչնիկը նեղը մնալով եւ իր պաշտպանած կուսակցութեան վրա լիովին վստահութիւն չունենալու պատճառով, ժողովը կազմող կու-

սակցութեան «հախ գին»ը ընդունեց...

Ժողովը վերջացաւ եւ ժողովականները սկսեցին ցրվել:

Վարանած թռչնիկի հետ կրկին գնացինք իրատուներ, նա շատ տխուր էր: Մեր ճամբորդութիւնը կրկին լոկի միջիկ կատարվեց: Երբ տուն հասանք ուզեցի նրանից բաժանվել եւ տուն գնալ, բայց նա առաջարկեց նստել ասելով՝

— Մնացէք, քունս չի անում, գիշերը չը պէտք է կարողանում քնել, ժողովից այնքան էլ լաւ տպաւորութեան տակ չը հեռացայ: Միութեան խնդրի հետ այդպէս վարվելը ինձ վրայ շատ ծանր տպաւորութիւն գործեց: Մի քանի պարտնների մէջ, որոնք կուսակցութեան մէջ չը գիտեմ ինչ պատճառներով մեծ դեր են խաղում, մի տեսակ կեղծութիւն, թագնված փառասիրութիւն ու ես նկատեցի. գուցէ սխալվում եմ, բայց յամենայն զէպս այդ տպաւորութեան տակ հեռացայ:

— Եթէ այդ կասկածները ունէիք, հապա ի՞նչի միացաք. եւ այդպէս չուտով:

— Շատ պարզ է պատճառը. որովհետեւ այդ կուսակցութիւնը աւելի զօրեղ է, եւ որքան ինտելիգենտ ու խոհուն մարդիկ լինեն նրա մէջ, այնքան շուտ վստահների առջեւ կա-

տալու համար. իր բառարանը գրարար բացատրութիւններով կազմեր է. որ թերեւս միակ պատճառը ըլլայ պարզ ընթացողներուն անմատչելի դառնալու: Բառարանը մէկ առաւելութիւն մըն ալ ունի այն է որ եւրոպացի հայագէտները կրնան մեծ օգուտ քաղել ակնէ հայ լեզուն սուսուսախոսելու համար:

Գինն է 25 ֆրանք:

Երկրորդ հատորը արդէն մամուլի տակ է, գինը նոյնպէս 25 ֆրանք է:

Պէտք է գիմել կամ հեղինակին
108 Avenue de Neuilly A Neuilly
Sur Seine

Կամ Բիւզանդական գրատուն
Սեղրոս խան թիւ 5
Ղալաթիա (Պօլս)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայ հասարակութեան յայտնի խորէն Ստեփանէ եպիսկոպոսը, թիֆլիզի մէջ վախճաներ է:

Խորէն ստեփանէ լաւ քարուղի, բարձրագոյն կրթութիւն առած անխոնջ աշխատող եպիսկոպոս մըն էր: Ան աշխատած է իբր մանկավարժ, իբր գրադէս եւ իբր հոգեւորական:

Կրակ ու բոց մարդ մըն էր: Տարօրինակ կտակ մը թողուցեր է որու մասին Ռուսիայէն թղթակցութիւն մը ստացած ենք. և յաջորդ թուով պիտի հրատարակենք:

— Հանգուցեալ Նէվրուզ Յարթիկի քոյրը, Տիկին Երմանիա 1000 ոսկիի շափ արժող ծովեզերեայ բնակարանը Եէնի Գիւղի

եկեղեցիին կտակեր է, պայմանաւ որ իր մահուանէն ետքը այդ բնակարանին կէսը եկեղեցւոյն ու վարժարանին մնայ, իսկ միւս կէսին հասոյթով ածուխ բաժնուի աղքատներուն:

— Քաղաքական Ժողովը իր անցեալ ուրբաթ օրուան նիստին մէջ Տարագրելոց յանձնաժողովի քառասամեայ հաշուեցուցակն ու հրաժարագիրը տեսնելով՝ որոշեց է հաշուեցուցակը Խըտըրեանի և Սէթեանի յանձնել քննութեան համար և գրել յանձնաժողովին անդամներուն որ շարունակեն իրենց պաշտօնը:

— Պարսից Շահը Դավրէժէն անցած միջոցին հրամայեց է որ հօրը կողմանէ տեղւոյն աղագային վարժարանին յատկացուած 200 թուման նպաստը կրկին տրուի, որոց վճարումը ժամանակէ մը ի վեր դադարած էր, և վերջերս միայն 160 թուման կը տրուէր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԸ

Թուրքիոյ արտասահմանի դեսպանները Բ. Դրան հազորդեր են թէ կրէտէի Եօրկիոս իշխանը մեծ պետութիւններու վեհապետներուն այցելած միջոցին յայտարարած է որ ինքը ժամանակը լրանալուն պէս, պիտի դադարի կղզին կառավարելէ, և խնդրեր է կրէտէն միացնել Յունաստանի հետ: Պետութիւնները Եօրկիոսը

մատ չեն բռնել: Ուրախ եւ համակրող են. երբ կարող են ուրիշի ձեռքով կրակ վերցնել. առանց այրվելու: Դադարի այդ ծառայութիւնը մատուցանել, պահանջի որ կրակը իրենց ձեռքերով վերցնեն, իսկոյն ժպիտները կանհետանան...

Եւ այդպէս դեռ երկար խօսեցինք. Թռչնիկի լեզուն բացվել էր ու էլ կանգ չէր առնում: Ընթացիտն ասած իմ քունս եկել էր, սակայն զսպում էի ինձ, որպէս զի նա չը նկատի եւ սիրաւ չը կոտորվի:

Մինչև լոյս խօսեցինք, Թռչնիկը յոգնեց, թուլացաւ՝ եւ ուզեց պառկել: Ես էլ նկատելով որ նրա սենեակում յարմարութիւն չը կայ պառկելու, ներողութիւն խնդրեցի եւ ճամբա ընկայ զէպի իմ բնակարանը:

Դուրսը արդէն լոյս էր. երկաթուղու գործարանների բանւորները շտապում էին գործատուն, առաւօտեան նախաճաշիկը, հացը ճանապարհին ուտելով. իսկ ես գնում եւ մտածում էի Թռչնիկի վրայ...

Մտածմունքներս սեւ ու մոռալ էին...

ՎԱՐԳՕ

(Շարունակելի)

բաց է բաց քաջալերած չեն, բայց հասկցուցած են թէ առաջարկը «իրողութիւն ըլլալէ» վերջ, իրենք չի պիտի հակառակին:

— Պօլսէն կը հեռագրեն թէ Բոսովայի և Սելանիկի նահանգապետները Բ. Գրան ուշագրութիւնը կը հրաւիրեն իրենց վիւլայէթներու գէշ վիճակին վրայ: Աւրիշ տեղեկութիւններ ալ Մակեդոնիոյ վիճակը շատ գէշ կը նկարագրեն:

Գիւանադիտական կեդրոն մը նոյնպէս Բ. Գրան մատնացոյց կընէ այդ անտանելի վիճակը և անոր սպառնական կացութիւնը: Նախարարական խորհուրդը այդ խնդրով պիտի զբաղի:

Կըսուի թէ Սուլթանը մտադիր է մասնաւոր քննիչ յանձնախումբ մը զրկել Մակեդոնիա, որուն գործը պիտի ըլլայ երկիրը բարելաւելու միջոցները քննել:

Այդ կազմուելիք յանձնախումբի անդամները որո՞նք պիտի ըլլան, դեռ յայտնի չէ:

— Թէեւ Թուրքիոյ և Յունաստանի մէջ եղած քանի մը առկախ մնացած խնդիրներու պատճառաւ, երկու պետութեանց միջև դժգոհութիւններ կան, այնուամենայնիւ Աթէնք և Պօլիս այս օրերս փոխադարձաբար իրար վստահացուցին բարեկամութեան մէջ:

Յոյն զեսպանը և իր պաշտօնեաները անցեալ օր Երլազ ճաշի հրաւիրուած էին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Իէքինէն կը հաղորդեն թէ՛ Ծրանսական լիազօր գեոպանը Լի-Հունկ-Ջանկէն պահանջած է Հնդկա-Չինի սահմանէն Չինական զինուորները ետ քաշել, դադարել Չինաստան զէնք մտցնելէ, որպէս զի նոր բարդութիւններ չը յառաջանան Չինաստանի մէջ:

— Վօլֆի գործակալութիւնը կը հաղորդէ որ Թաքուի արտաքին նախահանգիստը սառեր է և 50 շոգենաւ սառերու մէջ մնացեր են:

— Մարաշախտ Վալտերդէ նոյ՛ 25ին Բէքինէն կը հեռագրէ թէ՛ միջազգային զօրքերը զբառուած են թէ՛ Յեանկ քաղաքը, առանց չիններու կողմէն դիմադրութեան հանդիպելու: Չին զօրքերը նահանջներ են:

— Անցեալ երկուշաբթի մեծ պետութեանց Բէքինի գեոպանները պիտի ստուգէին Յինկ իշխանի և Լի-Հունկ-Ջանկի գեոպանական վաւերաթուղթերը:

— Չինական բարենորոգիչ, Գանք-ի-Աէյ, նամակ մը զրկած է գեոպաններուն, որուն մէջ կը յայտարարէ թէ Չինական դժբախտութիւններու պատճառը կայսրուհին և անոր խորհրդականներն են, որոնք պէտք է

Խստիւ պատժուին. բոլոր Չինները կը մտնեն միջազգային օրէնքները և կողբան Գերմանիոյ գեոպանի մահը: Բարենորոգիչը կը պահանջէ կայսրուհոյն արտաքսումը, երիտասարդ կայսեր վերահաստատումը, բոլոր յետագիւմականներու ձերբակալումը:

— Պալատի պաշտօնեաները կը հաղորդեն թէ՛ այրի կայսրուհին պիտի հեռանայ Սինկանֆուէն, և ինկ կայսրը Բէքին պիտի վերադառնայ:

— Թաքուի Բէքինի թղթակիցը կը հաստատէ որ թագուհին որոշած է Սինկանֆուէն, բայց թագաւորը Բէքին պիտի վերադառնայ: Իսկ իշխան Թուանի մասին «Թաքուի թղթակիցը ու է տեղեկութիւններ չի հաղորդեր, Բայց կը կարծուի թէ կայսրուհին տրամագիր է զայն պատժելու:

— Թաքուէն ժէնէրալ Շաֆֆի գրութեամբ մը Վալտերդէի ցաւ յայտնած է Բէքինի դիտարանին գործիքները վերցուած ըլլալուն համար: Այս նամակը պատշաճ լեզուով գրուած չըլլալուն պատճառաւ հեղինակին վերադարձուեր է:

— Ժէնէրալ Շաֆֆի հաղորդած է գեոպաններուն թէ՛ արգիւծ է անցուդարձը պալատին այն դռնէն, ուր ամերիկեան պահակազօրքն կը գտնուի, որովհետեւ յաճախակի թալաններ տեղի կունենան: Այս որոշումէն գեոպանները ինքզինքնին նախտուած զգացեր են:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Քրիւկէր Վիլհէլմէն շընգունուելուն համար մամուլի մէջ մեծ աղմուկ կայ: Կը մեկզգրուի նաեւ Թրանսվալի ներկայացուցիչը Պ. Լէյուս, որ ժամանակին Վիլհէլմին հաղորդած չէ եղեր Քրիւկէրի Պերլին այցելելու մտադրութիւնը:

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն թէ Քրիւկէր Վիլհէլմէն մերժուելէն վերջը, այլեւս արամագիր չէ ու եւ վեհապետի մը այցելել, այլ Հօլանտայի մէջ պիտի սպասէ, մինչեւ որ պատերազմը վախճանի մը յանգի:

— Հօլանտայի թագուհին մօրը հետ միասին ընդուներ է նախագահ Քրիւկէրը: Տեսակցութիւնը ժամ մը տեւեր է:

— Տըվէտ Պօէր զօրավարը Քաբանցնելու մտադրութիւնը կերելի թողուցեր է, որովհետեւ գէպի Հիւսիս կը բարձրանայ: Անգլիական ժէնէրալ Քնօքս զայն կը հետապնդէ, անոր վերջին հեռագիրը Պաքս Աւիլէն է:

— Չուիցերիոյ երեսփոխանական ժողովի մէջ՝ երեսփոխաններէն մին առաջարկած է դիմում ընել Անգլիոյ կառավարութեան և ժողովրդին, Թրանսվալի պա-

տերազմը դադարեցնելու համար:

— Գերմանիոյ Բայխովալի մէջ, երեսփոխանները հարցում ըրած են նախարարապետ Պիւլօփի կայսեր Քրիւկէրը շընգունուելուն համար:

Պիւլօփ պատասխանած է թէ՛ մերժումէն կամ ընդունելէն օգուտ մը չը կար թրանսվալի համար, ինք ալ Քրիւկէրի նոյն պատասխանը պիտի տար, ինչ որ տուեր էր Տէլքասէ:

Գերմանիա բոլորովին անկախ քաղաքականութեան կը հետեւի, բայց կուզէ Անգլիոյ հետ բարեկամ և հաշտ մնալ:

— Քերթուսէն կը հեռագրեն թէ լօրտ Ռօպէրթս դեկտ. 9ին հոն հասեր է, և Անգլիա պիտի մեկնի «Քանաթոս» շոգենաւով: Իրեն պիտի ընկերանան նաեւ Համիլթըն և Մարշալ զօրավարները:

Իսկ պօէրները կը շարունակեն իրենց յարձակումներն ու թալանները, 300 կով, 1500 ոչխար և 129 ձի յափշտակեր են դանազան տեղերէ: Եօհաննէսպուրկ ժանիքաւոր երկաթ թերթէ շըրջապատուած է, և միայն հինգ դուռ ազատ կը մնան անցուդարձի համար: Այս կերպով պօէրներուն ռազմաթերթ և ուտելիք հասցնել անկարելի պիտի ըլլայ: Ամէն օր շրջականերէն հարկաւոր կիներ ու տղաքներ կը հասնին:

ԱՅՐԻՔԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ

Աֆրիքաններու համաժողովին գումարումները կանոնաւորապէս կը շարունակուին, հակառակ Անգլիոյ գէժ արտասանուած խիստ ճառերուն:

Նոյ. 23ին Քաբի նախկին նախարարին եղբայրը Մ. Շրէյներ սաստիկ խտուրթեամբ խօսած է ըսելով:

Այլ եւս Անգլիոյ աղնուութեանը վրայ յոյս մի զնէք: Իր վարմունքը ժամօսնի յարձակումէն սկսեալ, ապօրինութիւն և վատութիւն է: Ան բարբարոսի մը պէս կը պատերազմի կիներու և մանուկներու դէմ՝ դրամատէրներու հրոսախումբ մը Բրէթօրիայի մէջ հաստատելու համար: Իր դատը այնքան վատ է, որ աշխարհիս բոլոր ատեաններէն պիտի դատապարտուի, կիներն իսկ չարչարած են և երբեմն հրացանի բռնած, իսկ ազարակները՝ հրդեհած: Անգլիոյ մղած պատերազմը կիներու և մանուկներու դէմ՝ անպատիժ չի պիտի մնայ: Յուսանք որ Անգլիա չի պիտի կրնայ աս ոճրագործութիւնը մարդկացնել: Երբէք Աֆրիքանները չի պիտի համաձայնին Օրանժի և Թրանսվալի անկախութեան շնջմանը: Պ. Միլնէր, Աֆրիքաններու նախատիչը

որ նշաւակ ընտրած է նախագահ Քրիւկէրի պատկերը, ազանդաւոր գիւանագէտ մըն է:

Ոչ ոք, բացի Աէսիլ Բօտը, այնքան զնաս չէ հասուցած Անգլիական դատին, որչափ Միլնէր: Քանի որ ան հոս է, երբէք խաղաղութիւն չի պիտի ըլլայ:

Յաջորդ օրը ներկայ էին 100 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին 120,000 Աֆրիքաններ:

Բողոքական հովիւներ, կաթուղի քահանաներ և բոլոր ճարտասանները բողոքեցին կանանց և մանուկներու դէմ մղուած բարբարոսական պատերազմի դէմ:

Մերժեցին անգլիացիներ, և յայտարարեցին որ, Հարաւային Աֆրիկեան կառավարութիւն մը կուզեն, կազմուած իրենցմէ և իրենց համար, Թագուհոյն հովանաւորութեան տակ, առանց Միլնէրի, որ Հարաւային Աֆրիկէն անապատ դարձուցած է, և յայտարարած է թէ՛ մտադիր է ոչնչացնել Աֆրիքանները:

— Գերմանական թերթ մը կը հաղորդէ թէ՛ ինք բարձրաստիճան անգլիացիէ մը իմացած է որ Անգլիա պօէրներու պիտի արտօնէ անկախ հասարակապետութիւն մը հիմնել Թրանսվալի հիւսիսային նահանգներու մէջ, եթէ նախագահ Քրիւկէր իր հպատակութիւնը յայտնէ:

Գերմանիա պատրաստ է աջակցիլ այս զիջումները ընդունել տալու, զորս ինք թելագրած է Անգլիոյ:

Ա Ն Գ Լ Ի Ս

Երեսփոխանական ժողովին մէջ բաւական յարձակումներ եղեր են Չէմպրլէնի վրայ Թրանսվալի պատերազմին առթիւ: Վերջինս պաշտպանուելով հանդերձ կը յայտարարէ որ ինք ինչ որ ըրած է իր պաշտօնակիցներու հետ խորհրդակցելով ըրած է:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Նոր նախարարութիւնը կազմուելէն յետոյ երեսփոխանական ժողովը ալ բոլորովին լուծուեր է: Երեսփոխաններու նոր ընտրութիւնները տեղի պիտի ունենան յունվարին իսկ երեսփոխանական ժողովը պիտի դումարուի փետրուարին:

ՉՈՒԱՐԱՆ „ՎՈՒԹԷՆՊԵՐԿ“

(Տպագրական տառերու) Կարծր մետաղ . Ուղիղ կարգ Հաւասար քարձրոքիան

Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գնեքով Հասցէ՝

Fonderie typographique „Gutenberg“ Sophia, Rue Graff Jgnatieff № 3, 18-25

Печатница Хр. Н. Войниковъ—Варна